«Կարեւոր էր պահպանել Կոմիտասին բնորոշ մաքրությունը եւ հանճարեղ պարզությունը»

Ամենակարևոր լուրերը Հայաստանից՝ Telegram-ում

Օգոստոս 14,2020 13:00 110

Հավանել 11 Կիսվել

Ռուբեն Կոսեմյանը՝ իր յուրահատուկ նախագծերի եւ ծրագրերի մասին:

Կանադահայ ջութակահար Ռուբեն Կոսեմյանը «Առավոտի» հետ զրույցում տեղեկացրեց, որ Բեթհովենյան տարվա շրջանակում 2 ամիս առաջ ձայնագրել է «Կրեյցերյան սոնատը»: «Այս սոնատը շատ տարբերվում է մյուսներից, նախ նրանով, որ մասշտաբային է եւ դուրս է գալիս կամերային ժանրի սահմաններից: Ինքը՝ Բեթհովենն այն անվանել է սոնատ՝ կոնցերտի ոճով: Մյուս սոնատների համեմատությամբ՝ այստեղ ջութակի եւ դաշնամուրի պարտիաները համահավասար են ու կարծես մրցում են միմյանց հետ: Եվ իրոք, երբ Մարգարիտա Գրիգորյանի հետ նվագում էինք, այդ զգացողությունը չէր լքում մեզ: «Կրեյցերյան սոնատը» անձամբ ինձ շատ ոգեշնչեց, եւ մենք սկսեցինք աշխատել նաեւ Բեթհովենի մյուս 9 սոնատների վրա: Այս տարի որոշել ենք հանդես գալ համերգներով, որտեղ կատարելու ենք բոլոր 10 սոնատները: Այնուհետ պլանավորում ենք թողարկել ձայնասկավառակ եւ այն նվիրել Բեթհովենի ծննդյան 250-ամյակին»,-հայտնեց Ռուբեն Կոսեմյանը:

Նրա խոսքերով, ստեղծագործություններ կան, որոնք իրեն հատկապես դուր են գալիս, բայց գրված են ուրիշ գործիքների համար, բայց ինքը տարվել էր այն մտքով, որ դրանք պետք է նվագել ջութակով: «Այդպես սկսեցի փոխադրել տարբեր ստեղծագործություններ ջութակի եւ դաշնամուրի համար: Ինձ համար այդ գործում առանձնահատուկ տեղ զբաղեցրեց Կոմիտասի ստեղծագործությունների փոխադրումը: Շատ կարեւոր էր պահպանել Կոմիտասին բնորոշ մաքրությունը եւ հանճարեղ պարզությունը, որը բխում է մեր ազգային ակունքներից»,-ասում է երաժիշտը, որի փոխադրությունների ժողովածուն տպագրվել է Սանկտ Պետերբուրգում:

Մեր հարցին՝ ինչպե՞ս կարելի է հանրահռչակել Կոմիտասին եւ ինքն ինչպես է դա իրականացնում, երաժիշտը պատասխանեց. «Կարծում եմ, որ Կոմիտասը միշտ իր առանձնահատուկ տեղը կգրավի համաշխարհային երաժշտության մեջ: Իմ երազանքներից մեկն է՝ Կոմիտասի իմ փոխադրությունները

կատարել եւ ձայնագրել միջնադարյան հայ եկեղեցիներում»:

Կարդացեք նաև

- **Ամօթ: Մահացու մեղքի համազօր է Կոմիտասին վերագրելու բան մը, որ բնաւ չէ ըրած. «Հայրենիք»**
- **Սուպեր Սաքո. «Ինչ որ ասել եմ՝ ճիշտ եմ ասել: Միակ բանը չի եղել, որ Կոմիտասը PR-ի համար էդ չի արել»**
- **Եթերում սխալների մի ամբողջ փունջ է հնչել: Կոմիտասին դիպչել սխալ մոտեցմամբ՝ նշանակում է հայ ինքնության հանդեպ ոտնձգություն գործել. Լիլիթ Մարտիրոսյան. «168 ժամ»**

Ռուբեն Կոսեմյանից նաեւ հետաքրքրվեցինք, թե ինչ ծրագրեր ունի երեւանի հետ կապված: «Երեւանում գտնվելով՝ ելույթներ եմ ունեցել բազմաթիվ բեմերում՝ տարբեր ծրագրերով: Այս ընթացքում հասցրել եմ մեծ ծրագիր ձայնագրել: Պայմանագրեր կան աշխարհի տարբեր լեյբլների հետ ձայնասկավառակներ թողարկելու նպատակով: Այդ թվում պլանավորում եմ ձայնագրել Է. Միրզոյանի եւ Է. Բաղդասարյանի ստեղծագործությունները՝ ամերիկյան լեյբլի պատվերով: Մեծ ցանկություն ունեմ նաեւ օգնել հայ պատանի ջութակահարներին իրենց դժվարին ուղու վրա»:

Ռուբեն Կոսեմյանը Կանադայում հաստատվել է 2010-ից, համերգներով հանդես է եկել աշխարհի լավագույն դահլիճներում: «Առավոտին» տված հարցազրույցներից մեկում նա ասել էր, որ երաժշտության միջոցով իրեն աշխարհաքաղաքացի է զգում, քանի որ երաժշտությունը համամարդկային շփման միջոց է:

Գոհար ՀԱԿՈԲՅԱՆ

«Առավոտ» օրաթերթ

13.08.2020

Ամենակարևոր լուրերը Հայաստանից՝ Telegram-ում

Օգոստոս 14,2020 13:00

Հավանել 11 Կիսվել

Share Tweet

ԲԱԺԻՆՆԵՐ՝ «Առավոտ» օրաթերթ , Մշակույթ

ԽՈՐԱԳՐԵՐ՝ Բեթհովեն , Կոմիտաս , Մարգարիտա Գրիգորյան

27,901 այցելություն, 2023-05-28-ին
ըստ Google Analytics-ի:

«Բիզնես» խորագրում հրապարակված նյութերը զովազդային բնույթի են:
© 1998 - 2023 Առավոտ – Լուրեր Հայաստանից

Website is made by Peyotto Technologies Lab.

Հրապարակման կանոններ Գովազդի պայմաններ Էթիկայի վարքականոն Հասցե եւ հեռախոսներ Աշխատակազմ